Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 50 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի բնակավայրերում գյուղական ճանապարհների, հեղեղատարների և կամուրջների, փոքր ջրամբարների վերանորոգում՝ գյուղական բնակչության սոցիալ տնտեսական պայմանների բարելավման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) «ՇԷն-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցե՝ 24 րյու դը Մոբյուժ, 75009, Փարիզ, Ֆրանսիա 2) Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, հասցե՝ Կարոլին Միշլեզ փողոց 1, 10115, Բեռլին, Գերմանիա 3) Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (ՀԷԿՍ-ԷՊԵՌ), հասցե՝ Սեմինարշտրասսե 28, 8042 Ցյուրիխ, Շվեյցարիա 4) «Ցալկեզյան հիմնադրամ», հասցե՝ 1005 Էլջին ստրրիթ Ուեսթ, Սուիթ 200, Քոբուրգ, Օնտարիո, Կանադա

4.	Ծրագիրը կատարողը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Նալբանդյան 110, ՀՎՀՀ՝ 01503283)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի բնակավայրեր, բնագավառը՝ ճանապարհաշինություն
6.	Ծրագրի բյուջեն	64,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի համայնքները: Բնակավայրերը, որտեղ կիրագործվեն ճանապարհաշինական ծրագրեր, կընտրվեն «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության ուսումնասիրությունների միջոցով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ բաժնի 3.2 գլուխը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Գյուղական ճանապարհների, հեղեղատարների, գյուղական կամուրջների և փոքր ջրամբարների վերանորոգում՝ 64,000,000 դրամ արժողությամբ, նախա-տեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) գյուղական ճանապարհների, հեղեղատարների, կամուրջների և փոքր ջրամբարների վերանորոգման համար շինանյութերի և ճանապարհաշինական սարքավորումների ձեռքբերում՝ 28,000,000 դրամ արժողությամբ. 2) վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 36,000,000 դրամ արժողությամբ:

		Ծրագրի շրջանակներում ձեռք բերված սարքավորումները կօգտագործվեն ապագայում նմանատիպ բարեգործական ծրագրեր իրականացնելու համար:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցությունը նախատեսված է նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ